ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/179

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 04.12.2019թ.)

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 04.12.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.12.2019թ. թիվ /26-1/19966-2019 գրությամբ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.11.2019թ. թիվ ՊՆ/02/2685-2019 գրության հիման վրա, 02.12.2019թ. թիվ /26-1/19966-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով

նախաձեռնել «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին հայտ է ներկայացրել նաև «ՎԱԼՄԼ» ՍՊԸ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության (կցվում է) 1.2 կետի համաձայն.

«Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ:

19.11.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի պահանջները, երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային նամակով դրա մասին տեղեկացնել «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին»:

Նույն օրը, այն է 19.11.2019թ., Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցմամբ հայտնել է հետևյալը. «ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում (հավելված 3.1) չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը (հավելված 3.1) չեն համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված

տեխնիկական բնութագրին: Անհրաժեշտ է ներկայացնել նոր ճշտված հավելված 3 և հավելված 3.1: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է գնահատման նիստը: Սույն ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է շտկել վերոհիշյալ անհամապատասխանությունները»:

25.11.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվեցին շտկված փաստաթղթերը և ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը հանձնաժողովն արձանագրեց, որ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերում կրկին առկա են անհամապատասխանություններ, տեխնիկական բնութագրերը շտկվել են մասամբ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի հայտը»:

Ընկերությունը վկայակոչել է հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: **Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:**

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի մասի համաձայն՝

5.Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) Հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման

դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Ընկերությունը վկայակոչել է նաև Կարգի 46-րդ, 47-րդ և 48-րդ կետերը:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ: Ընդ որում, արձանագրության մեջ հստակ անհամապատասխանություններ արձանագրելու փոխարեն ամրագրվել է ընդամենը հետևյալը.

Ըստ Ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիր	Ըստ մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր
14-րդ չափաբաժին՝ Կենտրոնախույս պոմպեր (Կենտրոնախույս պոմպ K50-32-125, 1.5K6)	
Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 12.5Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 20Մ, շարժիչի հզորությունը՝ 2.2Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պոմպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001---2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 12.5Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 20Մ, շարժիչի հզորությունը՝ 2.2Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: 2018թ. ռուսական արտադրության: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:
15-րդ չափաբաժին՝Կենտրոնախույս պոմպեր (Կենտրոնախույս պոմպ Կ65-50-160, 2Կ6)	
Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը	Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը

25Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 5.5Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պոմպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001---2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	25Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 5.5Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: 2018թ. ռուսական արտադրության: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:
16-րդ չափաբաժին՝ Կենտրոնախույս պոմպեր (Կենտրոնախույս պոմպ K80-65-160, 3K9)	
Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 50Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 7.5Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պոմպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001---2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 50Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 7.5Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով մեկ տարվա երաշխիքով: 2018թ. ռուսական արտադրության: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:
17-րդ չափաբաժին՝ Կենտրոնախույս պոմպեր (Կենտրոնախույս պոմպ K80-65-160, 3K9)	
Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 100Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 15Կվտ, եռաֆազ 380վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պոմպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001---2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 100Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 15Կվտ, եռաֆազ 380վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: 2018թ. ռուսական արտադրության: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:
21-րդ չափաբաժին՝ Ջրի պոմպեր (ԷՑՎ-8)	
Խորքային պոմպ ԷՑՎ-8-16-140: Արտադրողականությունը 16Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 140Մ, շարժիչի հզորությունը՝ 11Կվտ, եռաֆազ 380վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պոմպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001---2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	Խորքային պոմպ ԷՑՎ-8-16-140: Արտադրողականությունը 16Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 140Մ, շարժիչի հզորությունը՝ 11Կվտ, եռաֆազ 380վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: 2018թ. ռուսական արտադրության: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:

19.11.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի պահանջները՝ երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային նամակով դրա մասին տեղեկացնել «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ նույն օրը, այն է 19.11.2019թ., Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցմամբ հայտնեց հետևյալը. «ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում (հավելված 3.1) չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը (հավելված 3.1) չեն համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին: Անհրաժեշտ է ներկայացնել նոր ճշտված հավելված 3 և հավելված 3.1: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է գնահատման նիստը: Սույն ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է շտկել վերոհիշյալ անհամապատասխանությունները»:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել է հրավերի պահանջների նկատմամբ իր *համար ընկալելի բոլոր անհամապատասխանությունները*, և շտկում կատարելու փաստը հաստատվել է նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2019թ. թիվ 5 արձանագրությամբ:

25.11.2019թ. նույն թիվ 5 արձանագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվեցին շտկված փաստաթղթերը և ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը հանձնաժողովն արձանագրեց, որ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերում կրկին առկա են անհամապատասխանություններ, տեխնիկական բնութագրերը շտկվել են մասամբ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի հայտը:»

Մինչդեռ՝ Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Ավելին, Կարգի 46-րդ կետը հստակ պահանջում է, որպեսզի տեխնիկական բնութագրում անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվեն հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը հայտնել է, որ վերոնշված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից այդպես էլ անհասկանալի է մնում, թե գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ կոնկրետ ինչ անհամապատասխանություններ են արձանագրվել և, ընդհանրապես /դրանք մանրամասն չեն արձանագրվել/, ինչը պետք է շտկեր «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն, այսինքն ակնհայտ է, որ այս մասով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը հիմնավորված չէ, կանկախատեսելի և հասկանալի չէ ՍՊԸ-ի համար, ինչպես դա պահանջում է Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետը, 46-րդ և 47-րդ կետերը: Այնուամենայնիվ, Ընկերության կողմից սահմանված

ժամկետում և կարգով շտկվել է անհամապատասխանությունները այն մասով, որը որ հասկանալի և ընկալելի էր ՍՊԸ-ի համար:

Վերոհիշյալի արդյունքում ակնհայտորեն խախտվել է իրավական որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական սկզբունքները (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630, 15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 և 29.01.2008թ. թիվ ՍԴՈ-731 որոշումները), քանի որ Ընկերության համար նման բովանդակությամբ ծանուցում ստանալիս՝ անհասկանալի է եղել, թե կոնկրետ ինչ անհամապատասխանություններ են արձանագրվել հրավերի պահանջների նկատմամբ և հստակ ինչ պետք է շտկեր մասնակիցների կողմից:

Ավելին, հիմնավորված, որոշակի և կանխատեսելի չէ նաև «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը, քանի որ վերոհիշյալ որոշմամբ ընդամենը արձանագրվել է, որ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով կրկին առկա են անհամապատասխանություններ, տեխնիկական բնութագրերը շտկվել են մասամբ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել »:

Ընկերությունը հայտնել է, որ արդյունքում նման ոչ իրավաչափ եղանակով Ընկերության հայտը մերժելը նաև ոչ իրավաչափորեն հանգեցրել է «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Ամփոփելով վերոգրյալը Ընկերությունը խնդրել է «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/179 ընթացակարգի շրջանակներում 05.12.2019թ. ժամը 10:15-ին և 10.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 10.12.2019թ. ժամը 10:00-ին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոնշված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.11.2019թ. թիվ ՊՆ/02/2685-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «էլեկտրական սարքավորումների» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 17 մասնակիցներ, այդ թվում՝ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն:

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ճանաչվեց առաջին տեղ զբաղեցնող մասնակից: 11.11.2019թ. սահմանված կարգով համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվեց առաջին տեղ զբաղեցնող մասնակցին՝ ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրեց ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզեց, որ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 19.11.2019թ. կայացած նիստում որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետի ավարտից հետո գնահատող հանձնաժողովի ուսումնասիրությամբ պարզվեց, որ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերում կրկին առկա են անհամապատասխանություններ, տեխնիկական բնութագրերը շտկվել են մասամբ (մանրամասն տեղեկությունները ներառված են կից ներկայացվող հանձնաժողովի նիստերի արձանագրություններում):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի հայտը մերժել, միաժամանակ, մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/179 ընթացակարգի շրջանակներում 05.12.2019թ. ժամը 10:15-ին և 10.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/179 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/179 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ

չափաբաժինների մասով Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (հավելված 3.1) ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին:

4. Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությանը տրվում է երեք աշխատանքային օր արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար: Այնուհետև արձանագրվել է, որ Ընկերության կողմից տեխնիկական բնութագրերը շտկվել են մասամբ, ուստի հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.12.2019թ. թիվ /26-1/19966-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.11.2019թ. թիվ ՊՆ/02/2685-2019 գրությունը և կից փաստաթղթերը, «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ՍՑ-ՆԳ-2019/179 ընթացակարգի շրջանակներում ներկայացված դիրքորոշումը՝ կից նյութերով, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝

5. առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը

հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ, 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝

46. Սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն

արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

48. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի 7.18-րդ կետի համաձայն՝ կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքի ամբողջական նկարագիրը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, ***եթե***

<u>անհամապատասխանությունն արձանագրվել է՝ ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև հանձնաժողովի նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:</u>

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ ներկայացրած «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել և ծանուցվել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (հավելված 3.1) ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին, մասնավորապես՝

Ըստ Ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիր	**Ըստ մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր**
14-րդ չափաբաժին՝ Կենտրոնախույս պոմպեր (Կենտրոնախույս պոմպ K50-32-125, 1.5K6)	
Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 12.5Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 20Մ, շարժիչի հզորությունը՝ 2.2Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պոմպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001---2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 12.5Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 20Մ, շարժիչի հզորությունը՝ 2.2Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: 2018թ. ռուսական արտադրության: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:
15-րդ չափաբաժին՝Կենտրոնախույս պոմպեր (Կենտրոնախույս պոմպ Կ65-50-160, 2Կ6)	
Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 25Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 5.5Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց	Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 25Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 5.5Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց

հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պոմպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001---2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: 2018թ. ռուսական արտադրության: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:
16-րդ չափաբաժին՝ Կենտրոնախույս պոմպեր (Կենտրոնախույս պոմպ K80-65-160, 3K9)	
Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 50Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 7.5Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պոմպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001---2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 50Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 7.5Վվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով մեկ տարվա երաշխիքով: 2018թ. ռուսական արտադրության: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:
17-րդ չափաբաժին՝ Կենտրոնախույս պոմպեր (Կենտրոնախույս պոմպ K80-65-160, 3K9)	
Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 100Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 15Կվտ, եռաֆազ 380վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պոմպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001---2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	Կենտրոնախույս պոմպ, արտադրողականությունը 100Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 15Կվտ, եռաֆազ 380վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: 2018թ. ռուսական արտադրության: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:
21-րդ չափաբաժին՝ Ջրի պոմպեր (ԷՑՎ-8)	
Խորքային պոմպ ԷՑՎ-8-16-140: Արտադրողականությունը 16Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 140Մ, շարժիչի հզորությունը՝ 11Կվտ, եռաֆազ 380վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պոմպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001---2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	Խորքային պոմպ ԷՑՎ-8-16-140: Արտադրողականությունը 16Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 140Մ, շարժիչի հզորությունը՝ 11Կվտ, եռաֆազ 380վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: 2018թ. ռուսական արտադրության: Շարժիչի և պոմպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությանը տրվում է երեք աշխատանքային օր արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար: Այնուհետև արձանագրվել է, որ Ընկերության կողմից տեխնիկական բնութագրերը շտկվել

են մասամբ, ուստի հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:

Այսպիսով, Կարգի 46-րդ կետով սահմանվում է, որ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ ***անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Միաժամանակ Ընթացակարգի հրավերի 7.18-րդ կետով սահմանվել է, որ ***եթե անհամապատասխանությունն արձանագրվել է՝ ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում***, ***ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև հանձնաժողովի նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:***

Այսպիսով, վերը նշված իրավակարգավորումներով հստակ սահմանվում են այն գործողությունները, որոնք պետք է իրականացվել ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի հայտի 3.1 հավելվածում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրելով անհամապատաս-խանություն, պետք է ղեկավարվեր Ընթացակարգի հրավերի 7.18-րդ կետով և Ընկերությանն ուղղված ծանուցմանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, կցեր նաև հանձնաժողովի նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, որտեղ Կարգի 46-րդ կետի համաձայն մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները, մինչդեռ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Ընթացակարգի հրավերի 7.18-րդ կետով սահմանված պահանջը, քանի որ 19.11.2019թ. Ընկերությանն ուղղված ծանուցմանը չի կցվել նիստի արձանագրությունը, որպիսի պայմաններում Ընկերության համար անհասկանալի է եղել թե կոնկրետ ինչ անհամապատասխանություն է առկա հայտի 3.1 հավելվածում:

Գտնում եմ, որ նման պայմաններում Ընկերության վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունն օբյեկտիվորեն զրկված է եղել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտականությունները սահմանված կարգով կատարելու հնարավորությունից, ուստի ստանձնած պարտականության չկատարումը տվյալ պայմաններում պայմանավորված է եղել Ընկերության կամքից և վարքագծից անկախ հանգամանքներով:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.12.2019թ. թիվ /26-1/19966-2019 գրությամբ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**